ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» ապրիլի 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 11-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի № 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 02.08.2014թ. թիվ 19-Ա/Ք հրամանի 1-ին և 3-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» միջազգային մրցույթի գիտական ծրագրերի հայտերի գնահատման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 14.11.2014թ. թիվ 30-Ա/Ք հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստի 17.04.2015թ. թիվ 4 արձանագրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ֆինանսավորումն սկսել 2015 թ. հուլիսի 1-ից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳ նախարարի
2015թ. ապրիլի 20-ի
N 11-Ա/Ք հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2015» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի

ծածկագիր	ծրագրի անվանում	ծրագրի ղեկավար	կազմակերպություն
1. 15RF-054	Ալգորիթմական հարցեր և կոմբինատոր մեթոդներ խմբերի տեսությունում	Աթաբեկյան Վարուժան Սերգեյի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
2. 15RF-048	Darevskia ցեղի ժայռային մողեսների հիբրիդածին տեսակառաջացման բջջագենետիկ մեխանիզմները	Առաքելյան Մարինե Սեմյոնի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3. 15RF-078	Հայաստանի պալեոգենի համալիր զոնալ սխեմայի մշակում՝ ըստ միկրոֆաունայի, Տեթիսի և Պարատեթիսի նստվածքների մանրամասն համահարաբերակցությամբ և հնաշխարհագրական վերակառուցումներով:	Ասատրյան Գայանե Մխիթարի	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
4. 15RF-083	Դասակարգման ալգորիթմներ, հիմնված ECOC մոտեցման զարգացման վրա	Ասլանյան Լևոն Հակոբի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
5. 15RF-031	Հյուսիս-արևմտյան Հայաստանի Չորրորդական երկրաքիմիկան	Ավագյան Արա Վարուժանի	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
6. 15RF-064	Բնափայտ քայքայող աբեթասնկերի (բաժին Basidiomycota) գենետիկական ռեսուրսները. եզրազարդված աբեթասնկի, Ganoderma և Inonotus տեսակների տարբեր հավաքածուների գենետիկական և բջջագենետիկ	Բաղալյան Սուսաննա Միշայի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
7. 15RF-034	Ակուստիկական իմպուլսների առաջացումը և տարածումը տրոպոսֆերայում	Բարսեղյան Ռազմիկ Նահապետի	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
8. 15RF-030	Անալիզի նոր կենսաքիմիական մեթոդներ հիմնված ֆլուորեսցենտային մարկերների և լեկտին–ածխաջրատային փոխազդեցությունների օգտագործման վրա	Գասպարյան Վարդան Կառլենի	ՀՀ ԳԱԱ «Ակադ. Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
9. 15RF-024	Ֆոտոինդուկտված ատոմ – պինդմարմնային մակերևույթ փոխազդեցությունները և նրանց կիրառումը մետաղական թաղանթների միկրո-կառուցվածքավորման համար սինգուլյար լուսային փնջերով	Դրամփյան Ռաֆայել Խաժակի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
10. 15RF-081	Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի ճնշումը հակավիրուսային ջրալուծ պերիլեն նուկլեոզիդային անալոգներով	Կարապետյան Ջավեն Ալեքսանդրի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
11. 15RF-018	Հազվագյուտ հողային հեքսաբորիդների պինդ լուծույթների ստացումը և հետազոտումը ցածրջերմաստիճանային ջերմաէլեկտրական սարքերում օգտագործման նպատակով	Կուզանյան Արմեն Սարգսի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
12. 15RF-055	Կիրառական օգտակար հատկություններով օժտված մետաղապորֆիրինային միկրոծակոտկեն թաղանթներ	Կուրտիկյան Տիգրան Ստեփանի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
13. 15RF-009	Գրավիտացիայի սկալյար-թենզորային տեսությունների կոսմոլոգիական և աստղաֆիզիկական արդիական կիրառությունները	Հարությունյան Գոհար Հրայրի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ

ծածկագիր	ծրագրի անվանում	ծրագրի ղեկավար	կազմակերպություն
14. 15RF-049	Սևանա լճի բնական ռեսուրսների օգտագործման ինտեգրալ կառավարման գիտական հիմքերը	Հարությունյան Ռուբեն Միքայելի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
15. 15RF-085	Սենյակաջերմաստիճանային ֆեռոմագնիսականություն ալկալիական մետաղների ատոմներով լեգիրված նիկելի և կոբալտի ֆտալոցիանիններում	Մանուկյան Արամ Սպարտակի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
16. 15RF-046	Ջրալուծ դիարիլցիկլոալկենոնների՝ կոմբրետաստին A-4–ի ցիս–նմանակների սինթեզը և հակաուռուցքային ակտիվության գնահատումը	Մարկոսյան Աշոտ Իշխանի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
17. 15RF-076	Գեոթերմալ ակտիվության արտահայտումը Փոքր Կովկասի ստորգետնյա ֆլյուիդների կազմում	Մելիքսեթյան Խաչատուր Բորիսի	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
18. 15RF-082	Դեպրեսիայի ռեցիդիվի գենետիկական և կլինիկական նախադրյալները Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում. կանխատեսող կրոսկուլտուրալ մոդել	Մելիք-Փաշայան Արմեն Էդուարդի	ՀՀ ԿԳՆ «Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
19. 15RF-039	Ինտեգրվող սուպերսիմետրիկ մոդելներ ցածր չափողականություններում	Ներսեսյան Արմեն Պետրոսի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
20. 15RF-027	Կոնդենսված հետերոցիկլերի առաջացմանը բերող պիրիդինի ածանցյալների փոխարկումները	Պարոնիկյան Երվանդ Գառնիկի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
21. 15RF-003	Քվանտային էլեկտրոնիկայի սցինտիլյացիոն դետեկտորների համար հեռանկարային բյուրեղների սինթեզումը և նրանց հետազոտումը միկրոալիքային և օպտիկական սպեկտրասկոպիայի մեթոդներով	Պետրոսյան Աշոտ Գարեգինի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
22. 15RF-007	Դիմերային կատիոնով L-ցիստեինի աղերի հայտնաբերումը և համակարգված հետազոտումը	Պետրոսյան Արամ Մելքումի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
23. 15RF-061	Հայաստանի Հանրապետության էկոլոգատնտեսական համակարգի ագենտների դինամիկայի օպտիմալ կառավարման համար մեթոդների, մոդելների և ծրագրերի համալիրի մշակում	Սաղաթելյան Արմեն Կառլենի	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
24. 15RF-035	Կողքային ռադիկալում ացետիլենային խմբեր պարունակող էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային (S)- և (R)-α-ամինաթթուների սինթեզ	Սաղյան Աշոտ Սերոբի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ» ՊՈԱԿ
25. 15RF-063	Ամորֆ-բյուրեղային կառուցվածքով պոլիմերային նյութերի կոնտինուալ դինամիկական մոդելի մշակումը բարձր հաճախականությամբ զրգռումների դեպքում	Սարգսյան Սամվել Հովհաննեսի	ՀՀ ԿԳՆ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ ՊՈԱԿ